(Չի գործում 2017թվականի ապրիլի 1-ից)

Տպագրված է 3 օրինակից

Օրինակ ---

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի
04/02/2011թ թիվ 16-Լ որոշմամբ

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի նախագահ

---------- Անդրանիկ Նորեկյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ կենտրոնական բանկում

«24» փետրվարի 2011թ
ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

---------- Արթուր Ջավադյան

ԿԱՆՈՆՆԵՐ RL 1-025

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ

(ՏՈՒԺՈՂԻՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԸ «ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԽՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 12-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ)

ԵՐԵՎԱՆ - 2011

1. Սույն կանոնների նպատակն է ավտոտրանսպորտային միջոցների օգտագործման հետևանքով տուժած անձանց ապահովել պատճառված վնասների գծով բժշկական օգնության և առողջության վերականգնման արդյունավետ իրականացմամբ:

2. Սույն կանոններով սահմանվում են ավտոտրանսպորտային միջոցների օգտագործման հետևանքով տուժած անձանց պատճառված վնասները այն վնասների ցանկում ընդգրկելու վերաբերյալ Բժշկական հանձնաժողովի կողմից որոշման ընդունման կարգն ու պայմանները, որոնց գծով բժշկական օգնությունը կամ առողջության վերականգնումը Հայաստանի Հանրապետության տարածքում հնարավոր չէ արդյունավետ իրականացնել (այսուհետ՝ ցանկ):

3. Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման հետևանքով առաջացած վնասը Բժշկական հանձնաժողովի որոշմամբ ընդգրկվում է ցանկում տուժողի կամ նրա ներկայացուցչի ներկայացրած դիմումի հիման վրա:

4. Սույն կանոնների 3-րդ կետով նախատեսված դիմումին կից պետք է ներկայացվեն նաև հետևյալ փաստաթղթերը.

1) տուժողի անձը հաստատող փաստաթուղթը,

2) մանրամասն քաղվածք հիվանդության պատմությունից, որտեղ ներկայացված են տվյալներ հիմնական և ուղեկցող հիվանդությունների, կատարված հետազոտությունների և դրանց արդյունքների, իրականացված բուժման և դրա արդյունքների վերաբերյալ,

3) Հայաստանի Հանրապետության տարածքում գործող նեղ մասնագիտական բուժօգնություն ցուցաբերող բժշկական հաստատության եզրակացությունը այն մասին, որ տուժողի բժշկական օգնությունը կամ առողջության վերականգնումը Հայաստանի Հանրապետության տարածքում հնարավոր չէ արդյունավետ իրականացնել: Եզրակացության մեջ ներկայացվում են նաև բուժական այն միջամտությունները, որոնք անհրաժեշտ են տուժողի բուժման (առողջության վերականգնման) համար, հիմնավորում տվյալ բուժական միջամտությունների արդյունավետության վերաբերյալ, ինչպես նաև առաջարկվում է արտասահմանյան այն բուժհաստատությունը, որտեղ նպատակահարմար է իրականացնել նշանակված բուժումը (առողջության վերականգնումը),

4) արտասահմանյան բուժհաստատության հետ ձեռք բերված պայմանավորվածությունը (բուժհաստատության համաձայնությունը) տվյալ բուժումն իրենց մոտ անցկացնելու վերաբերյալ:

5. Ստանալով սույն կանոնների 3-րդ կետով նախատեսված դիմումը՝ կից բոլոր փաստաթղթերով՝ Բյուրոյի գործադիր տնօրենի պահանջով 3 աշխատանքային օրվա ընթացքում հրավիրվում է Բժշկական հանձնաժողովի նիստ՝ օրակարգում ներառելով դիմումի մեջ նշված վնասը ցանկում ընդգրկելու հարցը:

6. Սույն կանոնների 3-րդ կետով նախատեսված դիմումին կից որևէ փաստաթղթի բացակայության դեպքում Բյուրոյի գործադիր տնօրենն անհապաղ հայտնում է այդ մասին տուժողին (նրա ներկայացուցչին):

7. Բժշկական հանձնաժողովը դիմումի վերաբերյալ որոշում է ընդունում նիստ հրավիրվելու օրվանից հետո՝ 30 օրվա ընթացքում: Առանձին դեպքերում Բյուրոյի գործադիր տնօրենի առաջարկով Բժշկական հանձնաժողովը կարող է որոշում ընդունել սույն կանոնների 4-րդ կետով սահմանված փաստաթղթերի (դրանց մի մասի) բացակայության պայմաններում:

8. Բժշկական հանձնաժողովը որոշում ընդունելու համար կարող է՝

1) հարցումներ ուղարկել նեղ մասնագիտական բուժօգնություն ցուցաբերող բուժհաստատություններին՝ ներառյալ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գտնվողները,

2) պահանջել լրացուցիչ փաստաթղթեր,

3) նշանակել լրացուցիչ հետազոտություններ,

4) հանձնաժողովի աշխատանքներում ժամանակավոր ներգրավել առանձին ոլորտների նեղ մասնագետներ (կազմակերպել մասնագիտական կոնսիլիումներ):

9. Դիմումի մեջ նշված վնասը ցանկում ընդգրկելու մասին որոշում ընդունելու դեպքում Բժշկական հանձնաժողովը նաև սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործող այն բժշկական հաստատությունը (հաստատությունները), որի կողմից համապատասխան վնասի գծով բժշկական օգնություն ցուցաբերվելու կամ առողջության վերականգում իրականացվելու դիմաց տուժողն իրավունք ունի ստանալու օրենքով նախատեսված ապահովագրական հատուցում:

10. Դիմումի մեջ նշված վնասը ցանկում ընդգրկման ենթակա չլինելու մասին որոշում ընդունելու դեպքում Բժշկական հանձնաժողովը կարող է նաև առաջարկել Հայաստանի Հանրապետության սահմաններում այլընտրանքային բուժման տարբերակ:

11. Բյուրոն դիմումի վերաբերյալ Բժշկական հանձնաժողովի ընդունած որոշումը այն կայացնելուն հաջորդող աշխատանքային օրը ուղարկում է դիմողին:

12. Դիմումի մեջ նշված վնասի վերաբերյալ որոշում ընդունելու դեպքում Բժշկական հանձնաժողովը հետագայում՝ մինչև ցանկի մեջ փոփոխությունների կատարումը կամ նոր ցանկի հաստատումը, այլևս չի անդրադառնում նույն վնասի վերաբերյալ դիմումների քննարկմանը, և դրանց գծով ընդունված է համարվում Բժշկական հանձնաժողովի կողմից նախկինում ընդունված որոշումը: